## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 27

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 23 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեծամորի համայնքապետարան է դիմել համայնքի բնակիչ 1958թվականի ծնված Մարտիկ Հայկազի Առաքելյանը իր սեփականությունը հանդիսացող 0.23հա հողամասից /ծածկագիր՝ 04-064-015-006/ ավել 0.0053հա հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով.

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հողամասը չի հակասում ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի երկրորդ մասի դրույթներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել 1958թվականի ծնված Մարտիկ Հայկազի Առաքելյանի սեփականության իրավունքը Մեծամոր համայնքի 04-064-015-006 ՛ա՛կագրի իր 0.23հա հողամասից ավել 0.0053հա հողամասի նկատմամբ:

2.0.0053հա հողամասի գրանցման համար վճար չսահմանել:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցելու Մարտիկ Հայկազի Առաքելյանի իրավունքը որոշման առաջին կետում նշված հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի հունիսի 27-ի <<կառուցված բնակելի տանը և շենք-շինությունների նկատմամբ Մարտիկ Առաքելյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին>> N23 որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

20*17* թ. *07* *4*
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 28

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի <<ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՏԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N23 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի բ) ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի հունիսի 27-ի <<Կառուցված բնակելի տանը և շենք շինությունների նկատմամբ Մարտիկ Առաքելյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին>> N23 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 __ թ. ____________ ___
գ.Մեծամոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 29

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի 04-064-002-015 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Ազատության փողոց թիվ 26:

2.Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված ստորաբաժանմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 17թ. 07 29
գ.Մեծամոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 31

ՀԱՄՅԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի 04-064-001-007 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել հասցե Նար-Դոս փողոց թիվ 14:

2.Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված ստորաբաժանմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

20 17թ. 07

գ.Մեծամոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 30

## ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Վ.ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,ՄԱՐՏԻԿ ՀԱՅԿԱԶԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մեծամոր գյուղի բնակիչ Մարտիկ Հայկազի Առաքելյանի գ. Մեծամոր Վ. Տերյան փողոց թիվ 26 հասցեում գտնվող ժառանգության իրավունքով ձեռք բերված սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը. Հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի երկրորդ մասի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թվի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հաշվի առնելով, որ գույքը բավարարում է <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել քաղաքացի Մարտիկ Հայկազի Առաքելյանի (ծնված 02.03.1958թ.) գույքային իրավունքը՝ Արմավիրի մարզի Մեծամոր գյուղի Վ. Տերյան փողոց թիվ 26 հասցեում գտնվող 0.23հա հողամասի վրա գտնվող (բնակելի տունը կառուցված 1960թվին, թոնրատուն կառուցված 1978թ, ավտոտնակ կառուցված 1978թ) գույքի նկատմամբ:

2.0.23հա հողամասից ավել 0.0053հա հողամասը հատկացնել անհատույց սեփականության հիմունքներով:

3.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցելու քաղաքացի Մարտիկ Հայկազի Առաքելյանի (ծնված 02.03.1958թ) սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 17 թ. 7 24

գ.Մեծամոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 18-Ա

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158, 161, 164, 169-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամորի համանքի ղեկավար Էդվարդ Միրզոյանին 2017թվականի օգոստոսի 1-ից տրամադրել ամենամյա արձակուրդ 24 օր /20 աշխատանքային և 4 լրացուցիչ/ տևողությամբ:

2.Էդվարդ Միրզոյանին աշխատանքի մեջ համարել 2017թվականի սեպտեմբերի 4-ից:

3.Մեծամորի համայնքի ղեկավարի լիազորությունները ժամանակավորապես վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետին՝(Շ. Հակոբյան) սահմանված կարգով իրականացնել արձակուրդային վճարումը:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

2017թ. 07 27
գ.Մեծամոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 19

### ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Մեծամորի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գրիգորյանին 2017թվականի հուլիսի 27-ին գործուղել ք. Արմավիր՝ Արմավիրի մարզպետարան:

2.Աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ (Շ.Հակոբյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

2017թ. 07 19
գ.Մեծամոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 20-Ա

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՍՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Ամավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին խրախուսել և պարգևատրել մեկ հարյուր քսանհինգ հազար ՀՀ դրամ:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

20 17 թ. 07 28
գ.Մեծամոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն

28 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 21-Ա

ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի <<բ>> ենթակետով, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գրիգորյանի նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրում մեկ հարյուր վաթսուներոք հազար ՀՀ դրամ:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 17թ. 07 28
գ.Մեծամոր